

Արցախի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2020 թվականի ապրիլի 3-ի N 20-Լ որոշման

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը գործում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի հիման վրա:

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) Էներգետիկայի (Էլեկտրաէներգետիկա, ջերմամատակարարում, գազամատակարարում), հեռահաղորդակցության (Էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային համակարգում (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) կարգավորում է իրականացնում իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

2019 թվականի ընթացքում (այսուհետ նաև՝ հաշվետու ժամանակահատված) գումարվել է Հանձնաժողովի 16 նիստ: Ընդունվել է 81 որոշում՝ 20 նորմատիվ, 48 անհատական և 13 ներքին (լոկալ):

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում լիցենզավորվել է 12 սուբյեկտ, այդ թվում՝ հաշվառման վերցվել 7 նոր սուբյեկտ: 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառման վերցված ընկերությունների ընդհանուր թիվը կազմել է 55:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովում գրանցվել է Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 18 պայմանագիր:

Հանձնաժողովի նախագահի կողմից արձակվել է ստուգումների և մոնիթորինգների իրականացման 309 հրաման (հանձնարարագիր):

Հանձնաժողովում շրջանառվել է 1049 ներքին, 672 մտից և 568 Էլից գրություն:

Ստորագրվել է կադրային, գործառնական ու կազմակերպչական բնույթի 331 հրաման, որից՝ 104-ը՝ Հանձնաժողովի նախագահի, 227-ը՝ աշխատակազմի ղեկավարի:

Հանձնաժողովի աշխատակիցները, ծառայողական պարտականությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված, համագործակցության և աշխատանքային ծրագրերի շրջանակներում գործուղվել են 19 անգամ, այդ թվում՝ Արցախի Հանրապետության շրջաններ՝ 3, Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ՝ 15 և արտերկիր (Հունաստան)՝ 1 անգամ:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի համապատասխան կատարվել են՝

- քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարում և ստուգում, աշխատանքային ստաժի հաշվարկ, քաղաքացիական ծառայողների հիմնական աշխատավարձերի բնականոն աճի վերահսկողություն, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատում և մուտքագրում էլեկտրոնային ծրագիր,

- աշխատակազմի քաղաքացիական ծառայողների՝ վերապատրաստման դասընթացների մասնակցության ապահովում, ատեստավորման գործընթացի և թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպում:

Հանձնաժողովի պաշտոնական վեբ-կայքում (www.kargavorum.nkr.am) տեղադրվել է Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ 29 հայտարարություն և 130 նորություն, 34 հարց ու պատասխան, 222 արդիական թեմա, 211 հետաքրքիր նյութ, 34 հոդված, 7 նոր տեսանյութ, 8 ֆոտոալբոմ:

Հաշվետու ժամանակահատվածում վեբ-կայքի այցելությունների ընդհանուր թիվը կազմել է 23000՝ նախորդ տարվա 16000-ի փոխարեն:

Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանվել է Արցախի հանրային հեռուստառադիոընկերության, «Ազատ Արցախ» հանրապետական թերթի, «Մտեփանակերտ» շաբաթաթերթի և «Արցախպրես» լրատվական գործակալ-լուստիկայի կողմից:

Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների հետ համատեղ նիստերը լուսաբանվել են «հ1», «հ2», «Շանթ», «Արմենիա», «Կենտրոն» հեռուստաալիքներով և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթով:

Ապահովվել է զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը Հանձնաժողովի նիստերին:

Իրականացվել են աշխատանքներ Հանձնաժողով ներկայացված, Հանձնաժողովի պաշտոնական ֆեյսբուքյան էջում հնչեցված և թեժ գծի միջոցով բարձրացված մի շարք բողոքների, հարցադրումների հետ կապված, որոնց տրվել է օրենքով սահմանված ընթացք:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Էներգետիկայի բնագավառում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծություն, լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների վերահսկում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների ամփոփում և տվյալների շտեմարանի համալրում:

Ուսումնասիրվել և համապատասխան որոշումներ են ընդունվել Հանձնաժողով ներկայացված 27 հայտերի (լիցենզավորման և սակագների վերանայման) վերաբերյալ:

Տրամադրվել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության 9 լիցենզիա՝ 8-ը միասնական ՓՀԷԿ-երի կառուցման և էլեկտրական էներգիայի արտադրության համար, 1-ը՝ էլեկտրական էներգիայի արտադրության համար, ինչպես նաև 1 լիցենզիայի կրկնօրինակ: Երկարաձգվել է 1 լիցենզիայում ամրագրված ՓՀԷԿ-ի կառուցման ժամանակահատվածը: 9 լիցենզիայում կատարվել է ամրագրված ցուցանիշների ճշգրտում՝ ՓՀԷԿ-երի կառուցման աշխատանքներն ավարտելու և էլեկտրական էներգիայի արտադրության անցնելու կապակցությամբ: Ընդհանուր առմամբ՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործում է 31 արտադրող ՓՀԷԿ՝ 134,936 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և տարեկան 786,679 մլն ԿՎտ/ժամ էլեկտրական էներգիայի արտադրությամբ՝ ըստ գործարար ծրագրի: Արտադրող ՓՀԷԿ-երից 10-ը արտադրության է անցել 2019 թվականին: Կառուցման փուլում է գտնվում 12 ՓՀԷԿ՝ 51,05 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և տարեկան 262,71 մլն ԿՎտ/ժամ էլեկտրական էներգիայի արտադրությամբ՝ ըստ

գործարար ծրագրի: Կառուցվող ՓՀԷԿ-երից 7-ի կառուցման աշխատանքները մեկնարկել են 2019 թվականին:

Լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման նպատակով դիտանցումներ են իրականացվել Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում էլեկտրական էներգիա (հզորության) արտադրող ՓՀԷԿ-երում (համապատասխանաբար 6 և 8 ՓՀԷԿ): Արձանագրվել են էլեկտրական էներգիայի (հզորության) օգտակար առաքման քանակը, և այն, որ ՓՀԷԿ-երի փաստացի օգտագործվող հզորությունները կազմում են լիցենզիայի պայմաններում ամրագրված դրվածքային հզորությունների մոտ 50-60%-ը:

Լրամշակվել է Արցախի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան, ինչի արդյունքում Հանձնաժողովին իրավասություն է տրվել սակագների վերանայման ժամանակ սակագները որոշմամբ անփոփոխ թողնելու, եթե գործող և հաշվարկային սակագների տարբերությունը չի գերազանցում 5 տոկոսի շեմը: Վերանայվել և սահմանվել են Արցախի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

Հաստատվել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում տրամադրելու կարգը, սահմանվել է էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը:

2019 թվականի մարտին Հանձնաժողովի՝ բնակչության ներսնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության վճարների վերաբերյալ որոշման մեջ կատարվել է լրացում, համաձայն որի վճարները գանձվում են գազասպառման համակարգում այրվող գազերի ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրի տեղադրման դեպքում: Այս հարցի վերաբերյալ բազմիցս Հանձնաժողովը պարզաբանումներ է տվել՝ անդրադառնալով նաև մատակարար-բաժանորդ պայմանագրերի վերակնքման խնդրին՝ հայտնելով, որ պայմանագրերի վերակնքումն անհրաժեշտ է բնական գազի մատակարարման գործընթացի անընդհատության ապահովման համար և ուղղակիորեն չի ենթադրում գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության դիմաց վճարման պարտավորության ստանձնում, քանի դեռ տեղադրված չեն վերը նշված ազդանշանային սարքերը, ինչպես նաև պատշաճ իրականացված չեն տեխնիկական սպասարկման ծառայության մեջ ներառվող աշխատանքները, և առկա չեն ծառայությունների մատուցման նպատակով երկանգամյա այցերի արդյունքում հաշվարկային կիսամյակների համար կազմված՝ երկկողմ ստորագրված ակտերը: Պայմանագրերի վերակնքման համար սահմանված ժամկետը Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ մեկ անգամ ևս երկարաձգվել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Լրամշակվել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզա-վորման կարգը:

Սահմանվել են էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման նոր կանոնները, էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը, ինչպես նաև սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը:

Ջրային համակարգում իրականացվել են կարգավորվող անձանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների, տեխնիկատնտեսական և ծառայությունների մատուցման որակի ցուցանիշների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունների վերլուծություններ, կարգավորվող անձանց թույլտվության պայմանների կատարման հսկողություն:

Արցախի Հանրապետության շրջաններում խմելու ջրի մատակարարման գործունեություն ծավալող մի շարք ընկերությունների կողմից օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու՝ Հանձնաժողով ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ստանալու և սակագին սահմանելու վերաբերյալ հայտեր ներկայացնելու պահանջով Հանձնաժողովը դիմել է Արցախի Հանրապետության շրջվարչակազմերի ղեկավարներին: Ասկերանի շրջանի ենթակայության տակ գտնվող «Խաչենշին» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտն ամբողջական չլինելու հիմքով ուսումնասիրության չի վերցվել: Այլ հայտեր չեն ներկայացվել:

Ջրային ոլորտի իրավիճակի ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ Հանձնաժողովը նախաձեռնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի փոփոխություններ: Շահագրգիռ կողմերի և լիազոր մարմնի մասնակցությամբ անցկացված քննարկումների արդյունքների հիման վրա մշակվել է օրենքի նախագծի փաթեթը:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում հաշվետու ժամանակահատվածում կատարվել են կարգավորվող ընկերության կողմից ներկայացվող տարեկան և կիսամյակային ֆինանսական հաշվետվությունների, հանրային շարժական բջջային կապի, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող եռամսյակային և հեռախոսաֆիկացման վերաբերյալ ներկայացվող կիսամյակային հաշվետվությունների վերլուծություններ:

Հանձնաժողովի և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության միջև բանակցությունների արդյունքում Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ ամրագրվել են օպտիկամանրաթելային կապով հատկացվող տվյալների հոսքի արագության միջակայքի արագության ստորին և վերին սահմանները:

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության, Հանձնաժողովի և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության մասնակցությամբ անցկացված Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կապի օպերատորների միջև գործող ռոումինգի ծառայության սակագնի նվազեցման վերաբերյալ քննարկումների արդյունքում 2019 թվականի օգոստոսի 1-ից բոլոր օպերատորների ռոումինգի ծառայությունների սակագները համահավասարեցվել են: Այսինքն, «ՄՏՍ Հայաստան» ընկերության բաժանորդների համար մինչև օգոստոսի 1-ն արդեն գործող նվազեցված սակագներին համարժեք նվազեցվել են «Վեոն Արմենիա» և «Յուբոմ» ընկերությունների կողմից էլքային և մուտքային զանգերի սակագները՝ 45 դրամ սակագնի փոխարեն կիրառելով էլքային զանգերի համար՝ 38 դրամ, մուտքային զանգերի համար՝ 25 դրամ, բացառությամբ «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող բաժանորդների, որոնց մուտքային զանգի սակագինը 0 դրամ է, և sms կարճ հաղորդագրության համար գործող 60 դրամ սակագնի փոխարեն 40 դրամ սակագին:

Ռոումինգի ծառայությունների սակագների հետագա նվազեցման ապահովման նպատակով 2019 թվականի սեպտեմբերի 6-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հանձնաժողովի և «ՎԵՆՆ Արմենիա» փակ բաժնետիրական, «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական, «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ու «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև՝ փոխկապակցման վճարների և ռոումինգի ծառայությունների սակագների վերաբերյալ: Ստորագրված հուշագրի շնորհիվ 2020 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը կնվազեցվեն Արցախում և Հայաստանում օպերատորների կողմից մատուցվող ռոումինգի ծառայությունների սակագները հետևյալ չափերով.

- էլքային զանգերի սակագները կնվազեն շուրջ 25%-ով, այնուհետև նշված ժամանակահատվածում նվազումը կհասնի մինչև 30%,
- մուտքային զանգերի սակագները՝ շուրջ 40%-ով, այնուհետև՝ մինչև 45%,
- տվյալների փոխանցման և ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագները՝ շուրջ 50%-ով, այնուհետև՝ մինչև 65%,
- կարճ sms հաղորդագրությունների սակագները՝ շուրջ 65%-ով, այնուհետև՝ մինչև 75%:

Նշված գործընթացի ապահովման նպատակով 2019 թվականի նոյեմբերին Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ հաստատվել և 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության շարժական և ամրակցված հեռախոսակապի օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում սկզբնավորված զանգերի «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում վերջնավորման փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարների չափերի կիրառման ժամանակացույցը:

Որպես նշված գործընթացի հաջորդ քայլ 2019 թվականի դեկտեմբերին վերանայվել և 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Արցախի Հանրապետությունում մատուցվող մի շարք ծառայությունների առավելագույն սակագները: Արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ից ռոումինգի ծառայությունների սակագների նվազեցման հետ մեկտեղ նվազել են նաև 10 ծառայությունների սակագներ: Նվազեցման չափը կազմում է 9,4-33,3 %, միջինացված՝ 20,8 %:

Ուսումնասիրվել են «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված մի շարք հրապարակային օֆերտաների պայմանները, հաշվարկվել են հրապարակային առաջարկների գործարկման արդյունքում բաժանորդների խնայողության չափերը:

Երկարաձգվել են ռադիոհաճախականությունների օգտագործման 3 թույլտվությունների գործողության ժամկետները: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն են ծավալում լիցենզավորված մեկ ընկերություն և ռադիոհաճախությունների օգտագործման թույլտվություն ստացած ինը ընկերություն:

Մշակվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքի նախագծի փաթեթը: Փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի օրինական դաշտ հրավիրել առանց համապատասխան թույլտվության ռադիոհաճախականություն օգտագործող անձանց՝ հստակ սահմանված տույժ, տուգանքների կիրառմամբ:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել է 5 մրցույթ, որոնց արդյունքում «Փեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է հեռուստածրագրերի եթերային հառարձակման (վերահեռարձակման) լիցենզիա, «Էքսելենթ Տելեսիսթեմս» փակ բաժնետիրական ընկերությանը և «Ազգային ռադիո և հեռուստատեսություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ռադիոհաղորդումների եթերային հառարձակման (վերահեռարձակման) լիցենզիաներ: 1 մրցույթ հայտարարվել է չկայացած, 1-ը 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ գտնվել է հայտադիմումների ընդունման ժամկետում:

Ներկայումս հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) գործունեությամբ զբաղվում է 12, իսկ հեռուստածրագրերի հեռարձակմամբ (վերահեռարձակմամբ)՝ 4 ընկերություն՝ 2 եթերային և 2 կաբելային: Արցախի Հանրապետությունում գործում է հանրային հեռուստառադիոընկերություն:

Կատարվել են լիցենզավորված հեռուստառադիոընկերությունների եթերների ընտրանքային դիտարկումներ, դրանց արդյունքների՝ հեռուստառադիոընկերությունների կողմից ներկայացվող հեռուստառադիոհաղորդումների գրանցամատ-յանների ամենամյա տվյալների հետ համադրման և վերլուծման, այդ թվում՝ Արցախի Հանրապետության շրջաններում ռադիոեթերների հասանելիության ստուգման աշխատանքներ:

Մշտադիտարկումներ են իրականացվել 2019 թվականի սեպտեմբերին կայացած ՏԻՄ ընտրությունների քարոզարշավի ժամանակաընթացքում:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառում կատարվել է «Տեխնոտերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների համեմատական վերլուծություն և տվյալների շտեմարանի համալրում:

Փոստային կապի բնագավառում նույնպես կատարվել են «Արցախփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված տարեկան և կիսամյակային ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն, տվյալների շտեմարանի համալրում:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում 2019 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների մոնիթորինգների իրականացմանը, անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտմանը, ապրանքային շուկաների կառուցվածքի և գնագոյացման մեխանիզմների ուսումնասիրությանը, գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների բացահայտմանը և նրանց կողմից ներկայացված տեղեկատվությունների վերլուծությանը, ինչպես նաև մի շարք այլ աշխատանքներ՝ ուղղված տնտեսական մրցակցային միջավայրի ապահովմանը:

Մանրածախ գների մոնիթորինգ.

Գների մոնիթորինգն հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաներում գների փոփոխությանը հետևելու լծակ, ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումների, ինչպես նաև հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և կանխարգելման օպերատիվ և արդյունավետ միջոց:

2019 թվականի ընթացքում Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում գործող 30 առևտրային օբյեկտներում իրականացվել են պարենային և ոչ պարենային 43 ապրանքային շուկաների 80 ապրանքատեսակների մանրածախ գների թվով 103 մոնիթորինգ, որոնց արդյունքների վերլուծության համաձայն միջին գների անկում է արձանագրվել 26, գնաճ՝ 24 ապրանքատեսակների համար: Մնացած 30 ապրանքատեսակների միջին գները մնացել են անփոփոխ կամ տատանվել են 1%-ի միջակայքում:

Գերիշխող տնտեսավարող սուբյեկտների մոտ ուսումնասիրված ապրանքատեսակներից միայն օղի ապրանքատեսակի մասով է գնաճ արձանագրվել, ինչի կապակցությամբ կատարվել են գնաճի հիմնավորվածության ստուգման նպատակով ուսումնասիրություններ, իսկ ձեթ, բենզին, դիզվառեվիք, դեկտեմբեր ամսվա ընթացքում նաև հավի ձու և մանրածախ առևտրի ոլորտում մատնաքաշ հաց ապրանքատեսակների մասով գների իջեցում է արձանագրվել:

Գների փոփոխությունների դինամիկան արձանագրվել է նաև ԱՀ շրջաններում:

Կարևորվել են նաև տարբեր ապրանքային շուկաների գնագոյացման ուսումնասիրությունները, որոնց արդյունքում հնարավորություն է ստեղծվում ոչ միայն բացառելու չհիմնավորված գների կիրառումը, այլ նաև կարգավորելու շուկաներում ձևավորված մրցակցությանը չնպաստող պայմանները:

Անբարեխիղճ մրցակցության և հակամրցակցային համաձայնությունների մասով կատարած աշխատանքներ.

Շարունակվել են աշխատանքները անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառելու ուղղությամբ: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 103 դիտանցում՝ ուղղված կեղծ և մոլորեցնող ապրանքատեսակների շրջանառության կանխարգելմանը, հայտարարվող գեղչերի իսկության և մոլորեցման հատկանիշների ստուգմանը, մանրածախ առևտրի ոլորտում իրացվող ապրանքների վրա մատնանշվող տեղեկությունների արժանահավատության, օրենսդրության պահանջներին համապատասխանության, ինչպես նաև հնարավոր մոլորեցման հետ կապված խնդիրների ուսումնասիրությանը:

Հաշվի առնելով նախատոնական օրերի ընթացքում մի շարք ապրանքային շուկաներում առաջարկի ավելացումը, որի հետևանքով ավելանում են նաև ռիսկերը մրցակցային օրենսդրության խախտման առումով, Հանձնաժողովն, ըստ անհրաժեշտության, ավելացրել է իրականացվող դիտանցումների հաճախականությունը և վերահսկողությունը՝ ապրանքային շուկաներում չհիմնավորված գների կիրառումը և անբարեխիղճ մրցակցության դրսևորումները բացառելու նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտների և հասարակության իրազեկվածության աստիճանը բարձրացնելու՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորումները կանխարգելելու նպատակով պարբերաբար իրականացվել են տարբեր միջոցառումներ, այդ թվում՝ սեմինար-խորհրդակցությունների անցկացում տնտեսավարող սուբյեկտների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, լրատվամիջոցների մասնակցությամբ, տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության վերաբերյալ պարզաբանումների տրամադրում և այլն:

Ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն.

2019 թվականին ուսումնասիրվել են հացամթերքի, բանջարեղենի, մսամթերքի և սեղմված գազի շրջանառության ոլորտները: Վերլուծությունների արդյունքներով

հացամթերքի, բանջարեղենի և մսամթերքի ապրանքային շրջանառության ոլորտներում բացակայում են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտները: Իսկ սեղմված գազի շրջանառության ոլորտի կենտրոնացվածության աստիճանը էապես նվազել է, ինչը հանգեցրել է գների նվազմանը:

Այսօրվա դրությամբ Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են գտնվում 55 ապրանքային շուկաներում (որից 29-ը դեղերի շրջանառության ոլորտից) գործող 5 մենաշնորհ, 18 գերիշխող և 3 առևտրային ցանց հանդիսացող տնտեսավարող սուբյեկտներ:

Արցախի Հանրապետության շրջաններում կատարած աշխատանքներ.

Արցախի Հանրապետության շրջաններում ազատ մրցակցության պաշտպանության և խրախուսման նպատակով Հանձնաժողովի մասնագետների կողմից շաբաթական 2 անգամ իրականացվել են առաջին անհրաժեշտության ապրանքների մանրաձախ գների և անբարեխիղճ մրցակցության հնարավոր դեպքերի բացահայտման նպատակով դիտանցումներ:

Ուսումնասիրվել են առաջին անհրաժեշտության 42 ապրանքային շուկաներում առկա 74 ապրանքատեսակների մանրաձախ գները, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվել որոշակիորեն զսպելու գների արհեստական բարձրացման միտումները շրջաններում, ինչպես նաև վերահսկելու գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից կիրառվող գնային քաղաքականությունը հանրապետության շրջաններում:

Արցախի Հանրապետության շրջաններում մանրաձախ առևտրի ոլորտը մրցակցային է, քանի որ Ստեփանակերտում և շրջաններում արձանագրված գների դինամիկան համապատասխանում են:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2019 թվականին շարունակվել է սերտ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հետ: Իրականացվել են զգալի աշխատանքներ համագործակցության հուշագրերով և համատեղ աշխատանքային ծրագրերով նախանշված ուղղություններով՝ միտված հանձնաժողովների միջև տեղեկատվության փոխանակմանը, փոխադարձ այցելությունների միջոցով միջազգային փորձի ուսումնասիրություններին և օրենսդրական դաշտի ներդաշնակեցմանը:

Համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Հանրապետության կարգավորող հանձնաժողովների կողմից, ինչպես նաև արտասահմանում կազմակերպված համաժողովների և սեմինարների, այդ թվում՝

- հոկտեմբերին՝ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հրավերով՝ Հունաստանի մայրաքաղաք Աթենքում անցկացված Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի 50-րդ նստաշրջանին,

- նոյեմբերին՝ Մրցակցության միջազգային օրվան ընդառաջ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախաձեռնած «Արդյունավետ մրցակցության ապահովումը թվայնացվող աշխարհում» խորագրով համաժողովին,

- նոյեմբերին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման բլոկի հանրային ընդունարանի ամենամյա արտագնա նիստին և այլն:

Համատեղ նիստեր են տեղի ունեցել 2019 թվականի մարտին Երևանում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, հուլիսին Ստեփանակերտում և դեկտեմբերին Երևանում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հետ:

Համագործակցության համաձայնագրերով և համատեղ աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն հիմնականում իրականացվել են:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվել Արցախի Հանրապետության արդարադատության, Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների, ֆինանսների նախարարությունների, ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև շահագրգիռ այլ պետական մարմինների, Արցախի Հանրապետության արհեստակցական միությունների ֆեդերացիայի և այլ հասարակական կազմակերպությունների հետ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում կարգավորման պարտադիր վճար վճարող 24 սուբյեկտների համար հաշվարկվել են կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը, և համապատասխան տեղեկանքներ են ուղարկվել կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց ու վերահսկող մարմինին:

2019 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 826 339,6 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ 199 873,1 հազար ՀՀ դրամ, պետական տուրք՝ 29 740,6 հազար ՀՀ դրամ, ռադիոհաձախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ 596 785,9 հազար ՀՀ դրամ:

Հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ: